

2013թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական և սոցիալական զարգացման վրա

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2013թ. - 31.12.2013թ.

Թեմայի ղեկավարը

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Թեմայի մասնակիցներ

1. Խաչատրյան Վիլեն Վիկտորի – գիտաշխատող
2. Սարգսյան Վարդան Ալբերտի – գիտաշխատող
3. Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի – գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – կրտսեր գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Տնտեսական և սոցիալական զարգացման ընթացքի վրա էականորեն ներգործելու նպատակով ստացվելիք գիտատեխնիկական արդյունքները զգալիորեն պայմանավորված են ոչ միայն ներգրավված կադրային ներուժով և ֆինանսական ռեսուրսներով, այլ նաև գիտական ու կրթական համակարգերի նյութատեխնիկական զինվածության և ինֆորմացիոն-կոմունիկացիոն ապահովվածության աստիճանով: Գիտակրթական համակարգի զարգացման նշված կարևոր հիմնախնդիրը դեռևս հանգամանորեն ու խորը չի հետազոտվել: Անդրադարձը այդ հիմնախնդրին մեծ մասամբ կրել է թուուցիկ և ուղեկցող բնույթ,

մանավանդ չեն քննարկվել գիտակրթական համակարգի տեխնոլոգիական զինվածության մակարդակի տնտեսական կարգավորման ու կառավարման հարցերը: Ուստի հետազոտական խումբը նպատակադրվել է ուսումնասիրել գիտության և կրթության ոլորտներում առկա նյութատեխնիկական բազան, լաբորատոր գործիքների ու սարքավորումների արդիականությունը, փորձարարական հնարավորությունները, ինովացիոն-կոմունիկացիոն ապահովվածության աստիճանը, բացահայտել գիտակրթական համակարգի վերազինման համար անհրաժեշտ ֆինանսատնտեսական ռեսուրսների նկատմամբ պահանջը: Հետազոտության ընթացիկ փուլում կարևորվել են անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության հավաքման և ընդհանրացման, միջազգային համադրական վերլուծության մեթոդաբանության մշակման, գիտակրթական արդյունքների և դրանք պայմանավորող գործոնների ազդեցության մաթեմատիկական մոդելավորման, կանխատեսումային հաշվարկների իրականացման սկզբունքների ձևավորման հիմնախնդիրները:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Ծրագրի շրջանակներում նպատակադրվում է ունենալ՝

- Չնայած արդեն առկա համապատասխան օրենսդրական ենթահամակարգին անհրաժեշտ է օրենսդրական դաշտի հետագա զարգացում, որը հատկապես կվերաբերվի համապատասխան տեխնոլոգիական ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը:
- Տեխնոլոգիական առկա ռեսուրսների (գիտակրթական համակարգչային ցանցեր և տեղեկատվական ռեսուրսներ) կառավարման ամբողջական համակարգի ստեղծումը, որը կնպաստի ռեսուրսների առավել նպատակային օգտագործմանը և դրանք ՀՀ գիտակրթական համակարգի ընդհանուր և համակցված զարգացումն ապահովելուն:

- Որոշակի ֆինասական ռեսուրսների պետական մակարդակով կենտրոնացումը, որոնք ուղղված կլինեն ՀՀ գիտակրթական տեխնոլոգիական և ցանցային տեղեկատվական համակարգերի ստեղծմանը և միջազգայնացմանը:
- Ինտեգրալ տեղեկատվական համակարգերի ստեղծումը, որոնք հասանելի կլինեն ոչ թե առանձին գիտական կենտրոնների, գերատեսչությունների կամ համալսարանների, այլ ՀՀ գիտակրթական դաշտում գործող բոլոր միավորներին:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Հաշվի առնելով գիտակրթական համակարգի տեխնիկական հագեցվածության ուսումնասիրության և գնահատման ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության փորձը, ինչպես նաև եվրոպական երկրներում գիտակրթական ենթակառուցվածքների ներուժի գնահատման սկզբունքները, հետազոտական խումբը մշակել է գիտության ու կրթության համակարգերի նյութատեխնիկական զինվածության և ինֆորմացիոն-կոմունիկացիոն ապահովվածության համատարած վիճակագրական հետազոտության ու գնահատման և կանխատեսման ցուցանիշների համակարգ:

Գիտական աշխատանքի արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված գիտական հոդվածներ, զեկուցումներ գիտաժողովներում: